«ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 37
Հեռ.՝ +374 10 546434
Էլ. փոստ՝ info.am@civitta.com
www.civitta.am

27 Հոկտեմբերի 2022թ
ք. Երևան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

«Սիվիտտա ԷՅԷՄ» ՓԲ Ընկերությունը (նախկինում՝ «Ի-Վի Քոնսալթինգ»), համագործակցելով տեղական և միջազգային մասնագետների հետ, ներկայումս իրականացնում է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) զարգացման ծրագրի (UNDP) կողմից հայտարարված «Farm survey for assessment of greenhouse gas emissions from manure and land management practices in Armenia» նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որի իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը:

«Ի-Վի Քոնսալթինգը» հիմնադրվել է 2006թ և դարձել Հայաստանում կառավարչական խորհրդատվական, հետազոտական և կորպորատիվ ֆինանսավորման ոլորտի առաջատարներից: 2020թ Հյուսիսային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի առաջատար կառավարչական խորհրդատվական «Սիվիտտա» (CIVITTA) ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ձեռք է բերել հայկական «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը, որի թիմը շարունակում է ծառայություններ մատուցել Հայաստանի իր գործընկերներին, ինչպես նաև Ընկերության խմբի այլ ներկայացուցիչների:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի հիմնական նպատակն է հավաքել Հայաստանում գոմաղբի կառավարման պրակտիկայի վերաբերյալ թարմ տվյալներ՝ երկրին հատուկ արտանետումների գործոնների գնահատման համար: Վերոնշյալի իրականացման համար Ընկերությունը պատրաստվում է անհատական հարցազրույցներ իրականացնել Հայաստանի բոլոր մարզերում անասնապահության և այգեգործության ոլորտների տնտեսվարող սուբյեկտների հետ: Վերջինս հնարավորություն կտա պատկերացում կազմել Հայաստանում N_2O ուղղակի և անուղղակի արտանետումների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև կարևորելով Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում համանման Նախագծերի իրականացումը, Ընկերությունը խնդրում է տրամադրել ներքոնշյալ տեղեկատվությունը՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, ինչպես նաև խոզերի և թռչունների ու հիմնված այգիների ընդհանուր բաշխվածությունն՝ ըստ մարզի խոշորացված համայնքների,
2) ՀՀ Գեղարքունիքի մարզում տավարաբուծության, ոչխարաբուծության, այծաբուծության, խոզաբուծության, ինչպես նաև այգեգործության ոլորտներում տնտեսական գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների մասին տեղեկատվություն

(մասնավորապես, ԱՁ/ընկերության/տնտեսվարող սուբյեկտի անվանում, գտնվելու վայր (համայնք), գործունեության տեսակ, գյուղատնտեսական կենդանիների կամ ցանքերի չափ (գլխաքանակ/տարածություն), կոնտակտային անձ, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե)՝ անհատական և ճշգրիտ հարցազրույցներ իրականացնելու համար:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար: Հարցերի կամ պարզաբանումների համար կարող եք դիմել սույն Նախագծի շրջանակում «Սիվիտտա ԷՅԷՄ» կազմակերպության խորհրդատու Զավեն Մելիքջանյանին, 055878343:

Հարգանքով՝
Հովհաննես Աթաբեկյան

Ասոցացված Գործընկեր
«Սիվիտտա ԷՅԷՄ» ՓԲԸ